ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM

Համարը	N 693-Ն	*Տեսակը*	Հիմնական
Տիպը	Որոշում	*Կարգավիճակը*	Գործում է
Սկզբնաղբյուրը	ՀՀՊՏ 2015.07.01/40(1129) Հոդ.550	*Ընդունման վայրը*	Երևան
Ընդունող մարմինը	ՀՀ կառավարություն	*Ընդունման ամսաթիվը*	25.06.2015
Ստորագրող մարմինը	ՀՀ վարչապետ	*Ստորագրման ամսաթիվը*	29.06.2015
Վավերացնող մարմինը		*Վավերացման ամսաթիվը*	
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	11.07.2015	*Ուժը կորցնելու ամսաթիվը*	

Կապեր այլ փաստաթղթերի հետ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ, ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ԵՎ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 հունիսի 2015 թվականի N 693-Ն

ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ, ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ԵՎ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հաստատել տեսչական մարմինների գործունեության կատարողականի գնահատման սկզբունքները, չափորոշիչները և կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ **Հ. Աբրահամյան**

2015 թ. հունիսի 29
Երևան

Հավելված
ՀՀ կառավարության 2015 թվականի
հունիսի 25-ի N 693-Ն որոշման

ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ, ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ԵՎ ԿԱՐԳԸ

1. Սույն կարգով կարգավորվում են տեսչական մարմինների գործունեության կատարողականի գնահատման (այսուհետ՝ կատարողականի գնահատում) սկզբունքները, չափորոշիչները և կարգը:

2. Կատարողականի գնահատումը տեսչական մարմնի գործառույթ է, որի արդյունքում հավաստվում է, որ տեսչական մարմնի խնդիրներն իրագործվել են, նպատակներն իրականացվել են արդյունավետ և պատշաճ, կամ վերհանվում են տեսչական մարմնի գործունեության ընթացքում թույլ տրված բացթողումներն ու դրանց պատճառները:

3. Տեսչական մարմնի կատարողականի գնահատումն իրականացվում է սույն կարգին համապատասխան՝ առաջնորդվելով բազմակողմանիության, ամբողջականության և անկողմնակալության սկզբունքներով:

4. Տեսչական մարմնի կատարողականի գնահատման բազմակողմանիությունն ապահովվում է տեսչական մարմնի բոլոր գործառույթների իրականացման ընթացքի և դրանց արդյունքների, տեսչական մարմնի նպատակների իրականացմանն ուղղված գործունեության և ապահովման միջոցառումների վերլուծության ու գնահատման միջոցով:

5. Տեսչական մարմնի կատարողականի գնահատման ամբողջականությունն ապահովվում է տեսչական մարմնի գործառույթների իրականացման ընթացքի և դրանց արդյունքների, տեսչական մարմնի նպատակների իրականացմանն ուղղված գործունեության և ապահովման միջոցառումներն առանձին-առանձին գնահատելու, և ամփոփելով այդ գնահատականը՝ ամբողջ տեսչական մարմնի գործունեության արդյունավետությունը գնահատելու միջոցով:

6. Տեսչական մարմնի կատարողականի գնահատման անկողմնակալությունն ապահովվում է գործունեության արդյունավետության գնահատման գործընթացում շահերի բախումը բացառելու և անաչառ մոտեցում դրսևորելու միջոցով:

7. Տեսչական մարմնի կատարողականի գնահատման չափորոշիչներն են՝

1) նպատակի չափորոշիչներ.

2) գործընթացի չափորոշիչներ.

3) արդյունքի չափորոշիչներ:

8. Տեսչական մարմնի կատարողականի գնահատումը կատարվում է՝ տարանջատելով սույն կարգի 7-րդ կետով նախատեսված չափորոշիչների քանակական և որակական բաղադրիչները:

9. Նպատակի չափորոշիչները վերաբերում են տեսչական մարմնի հիմնական նպատակին՝ համապատասխան ոլորտի անվտանգությանը և օրենսդրության հետ համապատասխանությանը:

10. Նպատակի չափորոշիչներն են՝

1) տեսչական մարմնի գործունեության հիմնական նպատակին հասնելու մակարդակը.

2) ոլորտի առավել ռիսկային բնագավառներում փոփոխությունների առկայությունը.

3) ռիսկերի պլանավորման, վերլուծության և գնահատման համար հատկացված ֆինանսական միջոցները և մարդկային ռեսուրսները.

4) խորհրդատվության, մեթոդական աջակցության և կանխարգելման միջոցների համար հատկացված ֆինանսական միջոցները և մարդկային ռեսուրսները.

5) Հայաստանի Հանրապետության կառավարությանը կամ համապատասխան ոլորտների քաղաքականություն մշակող պետական մարմիններին ներկայացված առաջարկությունների քանակը:

11. Գործընթացի չափորոշիչները վերաբերում են տեսչական մարմնի գործառույթների իրականացման ընթացքին:

12. Գործընթացի չափորոշիչներն են՝

1) ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների միջին տևողությունը.

2) բարձր ռիսկային տնտեսվարող սուբյեկտներում և ստուգման օբյեկտներում ստուգումների քանակը՝ ստուգումների ընդհանուր քանակի համեմատությամբ.

3) ստուգումների տարեկան ծրագրում ընդգրկված ստուգումների միջին տևողությունը.

4) ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների ընդհանուր քանակի (որոնց շնորհիվ կանխվել է հանրությանը, շրջակա միջավայրին, ֆիզիկական կամ իրավաբանական անձանց գույքային շահերին, պետությանը սպառնացող էական վնաս կամ ռիսկ) հարաբերակցությունը ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված և իրականացված ստուգումների ընդհանուր քանակին.

5) ստուգման ենթարկված օբյեկտների բավարարվածության աստիճանը տեսչական մարմնի աշխատանքների անաչառության, ընթացակարգերի թափանցիկության, տրամադրված տեղեկատվության որակի և տեսչական մարմնի ծառայողների արհեստավարժության վերաբերյալ:

13. Արդյունքի չափորոշիչները վերաբերում են տեսչական մարմնի կոնկրետ լիազորության իրականացման անմիջական արդյունքին:

14. Արդյունքի չափորոշիչներն են՝

1) ստուգումների տարեկան ծրագրում ընդգրկված և ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների քանակական հարաբերակցությունը.

2) տեսչական մարմնի վերահսկման երեքից հինգ բարձր ռիսկային ոլորտներում իրավիճակի փոփոխությունը.

3) ըստ առանձին ստուգման հատկացված ֆինանսական միջոցները և մարդկային ռեսուրսները.

4) տեսչական մարմնի, տեսչական մարմնի աշխատակիցների դեմ բերված դիմում-բողոքների քանակը և դրանց արդյունքները:

15. Տեսչական մարմնի կատարողականի գնահատումն իրականացնում է տեսչական մարմնի որակի ապահովման ստորաբաժանումը:

16. Տեսչական մարմնի կատարողականի գնահատումն իրականացվում է որակի ապահովման ստորաբաժանման կողմից յուրաքանչյուր եռամսյակ և ստորաբաժանման ղեկավարի կողմից ներկայացվում տեսչական մարմնի

կառավարման խորհրդի հաստատմանը:

17. Տեսչական մարմնի կողմից իր գործառույթների իրականացման արդյունքում կիրառված պատասխանատվության միջոցների քանակը, դրանց չափը կամ պատասխանատվության առաջադրման միջոցները չեն կարող դիտարկվել որպես տեսչական մարմնի կամ դրա ծառայողի գործունեության արդյունավետության բնորոշման և կատարողականի գնահատման դրական չափորոշիչ և հիմք դառնալ խրախուսանքի, այդ թվում՝ պարգևատրման համար:

18. Տեսչական մարմնի կատարողականի գնահատման արդյունքների հիման վրա տեսչական մարմինն իր պաշտոնական կայքէջում յուրաքանչյուր տարի առնվազն 2 անգամ հրապարակում է հետևյալ տեղեկատվությունը՝

1) տեսչական մարմնի ծառայողների տրամադրած խորհրդատվության օգտակարության վերաբերյալ արձագանքների վերլուծություն.

2) ստուգաթերթերի՝ որպես օրենսդրության պահանջներին համապատասխանությանը նպաստող գործիքի արդյունավետության վերաբերյալ արձագանքների վերլուծություն:

19. Տեսչական մարմինն իր պաշտոնական կայքէջում հրապարակում է նաև «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածով նախատեսված մյուս տեղեկատվությունը:

20. Տեսչական մարմնի կատարողականի գնահատման արդյունքում վերհանված արդյունքների, առկայության դեպքում հայտնաբերված թերությունների վերացման ուղղությամբ որակի ապահովման ստորաբաժանումը առաջարկություններ է ներկայացնում տեսչական մարմնի կառավարման խորհրդին:

21. Կառավարման խորհուրդը քննարկում է սույն կարգի 20-րդ կետում նշված առաջարկություններն ու տեսչական մարմնին տալիս է համապատասխան հանձնարարականներ, որոնց կատարման նկատմամբ հսկողություն է իրականացվում որակի ապահովման ստորաբաժանման կողմից:

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար

Դ. Հարությունյան